ՀՏԴ 83 : 82-1 *Գրականություն*

Զինաիդա Բալայան,
բ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ,
գրականության և լրագրության ամբիոն, դասախոս

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊՈԵԶԻԱՅԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱԿՏԵՐԸ (ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ <<ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՂԻԿՆԵՐԸ>> ՎԻՊԱՍՔԻ ԱԶԱՏԱՇՈՒՆՉ ՄԵԿՆԱԴԱՇՏԸ)

Բանալի բառեր. *Արցախյան Շարժում, Քրիստոսի ծաղիկները, Մասիսներ, Արցախի քաղաքական ճակատագիրը, ասք, Ավետարանոց, Քիրս :*

З. В. Балаян, к.ф.н., доц.
каф. литературы и журналистики, АрГУ

ХУДОЖЕСТВЕННЫЙ ОБРАЗ ПОЭЗИИ АРЦАХСКОГО НАЦИОНАЛЬНОГО ДВИЖЕНИЯ В ПРОИЗВЕДЕНИИ ВАРДАНА АКОПЯНА “ЦВЕТЫ ХРИСТА”

Арцахская национально-освободительная борьба, не имеющая аналогов, является последней героической страницей политической судьбы армян, полной драмы. Она полна мужества, эпизоды неописуемых военных подвигов, которые стали избранными темами для литературных и творческих работ, рассказов, мемуаров, созданных поэтами-писателями, участвовавшими в этой героической борьбе: солдатами пера.

Рассказ В. Акопян «Цветы Христа», которы стоял у истоков этой борьбы, является одним из ценных произведений этой серии.

Ключевые слова: *Арцахское движение, “Цветы Христа”, Масис, политическая судьба Арцаха, рассказ, Аветараноц, Кирс.*

Zinaida Balayan,
PhD in Philology, Associate Professor, ASU

FICTIONAL CHARACTER OF THE POETRY OF ARTSAKH NATIONAL MOVEMENT OF THE VARDAN HAKOBYAN ‘S "FLOWERS OF CHRIST"

The Artsakh national liberation struggle, which has no analogues, is the last heroic page of the political destiny of Armenians full of drama. It is full of courage, episodes of indescribable military exploits, which have become selected themes for literary and creative works, stories, memoirs created by poets-writers who participated in this heroic struggle: soldiers of the pen.

The story of V. Hakobyan "Flowers of Christ" standing at the sources of this struggle is one of the valuable works of this series.

Key words: *Artsakh movement, "Flowers of Christ", Masis, political fate of Artsakh, story, Avetaranots, Kirs.*

Արցախը ծաղկազիր նամակ է լեռների վրա՝
պարզված հավերժին…
Վարդան Հակոբյան ,<<Քրիստոսի ծաղիկները >>

Գրականության հիմնական նպատակը կյանքի իրական հանգամանքների ու իրական բարքերի, երբեմն նաև անիրական երևույթների մեկնաբանությունն է, տիպական կառուցվածքի վեր հանումը ու ճանաչողական, գնահատողական մղումներ ստանալը: Իրական կյանքը ստեղծում է արվեստի մեծ գործեր, գեղագիտական, իմացաբանական մղումներ է ներարկում նրա երակները, ժամանակ հարաբերությունում կրում է որոշակի ընդհանրություններ, փոփոխություններ, բայց պահում է յուր արտացոլանքները գրողի աշխարհայացքի և նրա ստեղծագործության վրա:<<Երևելի կրիտիկոսը>>՝ (Մուրացան) Բելինսկին արվեստի շուրջ մտորելով, նկատում է, թե վերջինս <<իրականության վերարտադրությունն է, կրկնված, կարծես նորից ստեղծված մի աշխարհ>>:

Իսկական գեղարվեստական երկը սնվելով կյանքից, ծնվելով նրա հարաբերությունների ու հակասությունների բախումից կամ զուգակցումից, ժամանակի մեջ մնում է որպես մշակույթի արժեք. հիրավի՝ ճշմարիտ է Չարենցը.

Թեկուզ դարն է ծնում և երկիրն է տալիս երգին շունչ ու ոգի-
բայց երգը երկրից ու դարից մի՛շտ երկար է տևում…

Հաճախ գեղարվեստական երկն է ստեղծում իր գնահատման չափանիշը, յուրովի գծելով քննողական դաշտ, առաջադրելով բանաստեղծի մեկնողական ներքին խառնվածքին բնորոշ պոետիկա, ենթարկվելով կամ չենթարկվելով տեսական ժանրային համապատասխան սկզբունքներին: Մեկնաբանական և արժեքաբանական, վերլուծական, համադրական, հակադրական գնահատման ասպեկտներում քննենք <<Քրիստոսի ծաղիկների>>… կառուցողական շրջույթները, ավանդապահ, թե՛ ավանդախախտ դեստրուկտիվ ընթացք վերապահելով Վարդան Հակոբյանի պոեմին…

Ո՞վքեր են նրանք՝<<Քրիստոսի ծաղիկները…>>, որոնք ի վերուստ արդեն կարգված են լուսապսակվելու, լուսապսակ կրելու մի ավելի վեր, ավելի հրեղեն, հայրենադեմ լինելության՝ ազատության, անկախության ուխտին ուկնդիր:

Հարկա՛վ, հարցադրումն անբեկանելի, անտրոհելի է, մեկնաբանումը՝ աստվածահաճո ու աստվածատուրք…

Ա՞սք է, թե՞ առասպել, հիշողությո՞ւն է, թե՞ պատմություն, տարեգրությո՞ւն, թե՞ ժամանակագրություն, խենթ-խիզախների վարքագրությո՞ւն, թե՞ հորինվածք՝ տաղանդավոր վիպերգուի լեզվամտածողության բարձր մակարդակ:

‘Դադարներ>>՝ կտրուկ շրջադարձներով…

‘Դադարների>> բանաստեղծական կատարումը՝ կառուցողական կերպը, կարծես հիշեցնում է անտիկ աշխարհի **էպինիկաներ (հաղթերգեր՝ ներբողներ) արարողի՝ Պինդարիոսի (Ք.ծ.ա. 6-5-րդ դդ.)** պոետական արտասովոր նկարագիրը, բանաստեղծություն արարելու կերպը, երկերի բարդ կառուցվածքը՝ քերթվածների շարային, ժանրային արտասովոր կազմանյութը՝ **հասարակական ծեսերի, տոնախմբությունների, ավանդապատումի, առասպելական երանգներով հորինված երկերի անսովորությունը**՝ ներկայացված **ստրոֆե-անտիստրոֆե-էպոդոս** ձևույթում:

Հակոբյանի մոտ բանաստեղծական պատկերները **ստրոֆեյով՝ <<Երկիր սրբավայրով**>>, ու փիլիսոփայական խոհի՝ **անտիստրոֆեյի՝ <<Դադարների>> պրոզայիկ արքետիպով**, ապա նորից՝ **<<Հաղորդություն>> ստրոֆեյով** են կազմաբանվում, պոետական տեսքի բերվում:

Քերթողական միջնորդությամբ բանաստեղծը արարման խորհուրդն է քննում՝ մեկնելու առեղծվածը՝<<**Կրկին դադարներ>>-ից էպոդոսին՝<<Անխուսափելի կյանքից>> ու <<Շրջանակից դուրս>>** միջնորմները՝ այն տարբերությամբ, որ հակառակ Պինդարիոսի՝ հազիվ չափային շարժում տեղավորվող՝ **ստրոֆե, անտիստրոֆե, էպոդոս** կառուցվածքային եզրույթի հզորահաղթ անցումների նկարագրին, Հակոբյանի պոետական շրջույթները դառնում են անչափակիր՝ քերթվածից-արձակ ձգվող տողաշարեր, արարվող ծեսից ու ծննդացոլքից՝ առասպել, տարեգիրք դարձած վարքամատյանից՝ ասք-լինելություն, հուշամատյան, ասք-ավանդապատում, ապա Արցախ աշխարհի սուրբ նահատակների՝ Քրիստոսի ծաղիկների արյան շառափայլով, կորուսակիր վարքով հաստատված, սրբացված հերոսապատում… Այսպես ձև ու ձևույթ, խախտ ու չափություն, սկիզբ ու նախասկիզբ՝ գիրկընդխառն արարվել է ասքը՝ Վարդանական <<դադարների>> կտրուկ շրջադարձներով, քննելու ինքն իրեն ու ժամանակը, Արցախյան զոյամարտը, զինվորներին, բոլորին…. Խաչի պապին, Սաթենիկ տատին, Զառունց խենթերին՝ Ակուսիկ Ջհանին, Ծատուրին, ո՞ր մեկը թվես :

Հե՜յ վախ, Մեր, ո՞ւր թռավ քո սիրտը՝ թևին, հևին հևք տվեց ու… թռա՜վ հրաշքի պես, հե՜յ, Մեր՜ր…

Թե՞ կռիվ կա աշխարհում. ախր այդ կռիվը նախ յուրաքանչյուրի հոգում ու մարմնում է, որ կելնի ու կհորդանա՝ Արցախ աշխարհին ապավեն կդառնա: Հակոբյանի <<դադարները>> այլևս <<դադարներ>> չեն՝ ուղղակի իմաստով, այլ՝ ցավ ու կորուստ, ոգեղեն ցոլք, կրակված հոգիներ, արցախականչ ձորեր ու… երդում՝ եռագույն դրոշին. ե՞րբ և ինչպե՞ս, որտե՞ղ ու ո՞ր ժամանակներից այսպես եղավ ու… այսօր ժամ ու ժամանակ տվել ու կռիվ են բռնել անտեր թուրքի հետ, որ վայրենաբար փորձում է տիրական լինել իր մոգոնած <<հայրենիքում>>: Այսպես Վարդանական ասքը գլորվում, հա՜ գլորվում ու կարոտականչ է դառնում՝ Սաքունց սարի սուրբ մատուռին պահ տված 3 տարեկան երեխա ասես, որ**…<<ամուր սեղմել է մայր մտնող արևի շողերն ու քնել՝ անցած, ներկա ու գալիք բոլոր պատերազմները հաղթանակած**>>՝ վաղուց զինվոր դարձած: Հապա՛…

Հակոբյանի բանատողը տող չէ այլևս, նրա բանարվեստը դրասանգվել է պատկերախիտ վրձնմամբ, մակդիր էպիդետները այլևս ոչ թե երկրորդվել, այլև երրորդվել, չորրորդվել ու աստղաթև, իրոք, հայեցողական, համադիր ու հակադիր են դարձել,-

Երազը - ահա մեր առաջին հանդիպման վայրը:

Երազը - ահա մեր ժամադրավայրը վերջին [1], - կխորհեն նրա հերոսները:

Իսկ սամում ապրած արցախցու բանաստեղծական հոգուն, երազը կդառնա միայն սպասված ժամադրավայր:

Ի՞նչ ավանդական չափույթներով պիտի քննել ասքը, երկվություններով լցված Հակոբյանի քերթողական հոգու դինամիկ անցումները, ի՞նչ խոհա-փիլիսոփայական դիտույթներ է նա ելման կետ ընդունում ու, արդյո՞ք, ընդունում է, արդյո՞ք, մի տաղանդավոր ասացող չէ՞ երկիր դրախտավայրի շուշանափերին իր սիրակիր թարթումները փնտրող ու շյուղ-շյուղ բանատող դարձնող քերթողը, պոետական ի՞նչ կառույցներ ունի նա… ենթակա՞ են, թե՞ կարգալույծ, ասացողի բանատրո՞ւք է, թե՞ հոգու անսահման մերձերից ձայնարկող կրկնաձայն, անդնդախոր ափերի եղեգան փո՞ղ, չարագույժ կռի՞նչ…՝ ո՞ր կենդանու տեսքով.

Եվ մի ամբողջ գիշեր, թեժածարավ գույների մեջ
թավալվելով,
ես ընկղմվել էի հովտի մանուշակներում, պառկած էի տկլոր,
վերակերտում էի ժայռերը՝
չկարողանալով կասեցնել
իմ այնքան տաք բռնկումի գրոհը՝ դեռ կին չտեսած
եվ անանուն ու անմարմին, թունավոր ծաղիկը դրախտավայրի …[2]

Եվ պետք չէ լավ քերթված արարելու համար չափակիր լինել եղած գրական ուղղություններում ու պոետական կուլտուրայում: Լսենք այս դեպքում երևույթը հաստատող Արշակ Չոպանյանի մեկնումները՝ գրական երկի ու գրական ընդհանուր օրենքների հարաբերությունների շուրջ: **<<Ենթադրել որ գրված կանոններեն, տրված բանաձևերեն, վավերացված սեռերեն դուրս չկա գրականություն, ատիկա իմաստակություն է: Գրականությունը կը ծնի արվեստագետին տպավորական հոգիին վրա արտաքին ու ներքին աշխարհներուն ըրած կրկին ազդեցությենեն, և գրական գործերն են, որ կանոնները կը շինեն, ոչ թե կանոնները՝ գրական գործեր>>**[3]:

Իսկ բնության բոլոր անտես ու անմարմին երևույթները, կանչերը՝ դեռ երկունքված ու ծնունդ չապրած, դեռ աստղացոլք ու ասքաշյուղ են, հմուտ ասացողի շրթին՝ շառագույն հևք են դարձել ու ծարավի են, ծարավի՝ հավիտենական ճամփածիրներում, ձարխոտերի, գիլամասրենու, դեղձենու և անգամ՝ հարալեզների կանչերում, որ ծառերի վարսերն են, ու ծեծկռտուք են՝ շրթեշուրթ, անխոս մեղեդի, կորսվա՞ծ, թե՞ դեռևս չերգված, հավաքված բանաստեղծի հոշոտված մարմնի ու անչափակիր հոգու շուրջ…

Կա ու չկա վերադարձ, սպասում, կա ու չկա ժամադիր հուշ, <<չբռնկվող երազ ու շող>>:

<<Դադարների>> ելման կետը Արիստակես Լաստիվերտցու <<Պատմության>> նախաբանն է հիշեցնում. թե ինչ մեղքերի գնով պատուհասվեց ազգն հայոց ու… մատենագիրը, որ շարունակում է Նարեկա դպրոցի ավանդները, շարունակաբար, տարեգրական, պատմագրական, ժամանակագրական երկասիրություններին հատուկ հարաբերությամբ է մատենագրում թուրք-սելջուկներից Հայաստան աշխարհին հասած դժբախտությունները՝ սթափությամբ ու ճշտությամբ տալով Հայաստանի քաղաքական նկարագիրը: Հայաստան երկիրը ականատես մատենագրի դիտմամբ՝ <<**այժմ ընկած է բոլոր ճանապարհների խաչմերուկներում՝ մերկ, խայտառակված, և կոխկրտում են նրան նախատինքով ճանապարհների բոլոր անցորդները՝ ելած հայրենի աշխարհից, օտարացած ծանոթներին, հեռացած ընտանիքներից, բարեկամներից ու ազգականներից՝ դարձել է գերի ու կալանավոր բոլոր ազգերին>>**:

---

[1] Հակոբյան Վ., Քրիստոսի ծաղիկները, տե՛ս Անդրադարձի տեսիլներ, ԵԺ, Ե.,<<Հայաստան>> հր., 2002 (այսուհետև՝<<Քրիստոսի ծաղիկները>>), էջ 505:

[2] Նույն տեղում, էջ 506:

[3] Չոպանյան Ա., Մեր գրականությունը, տե՛ս Հայ գրական քննադատության քրեստոմատիա, 2հ-ով, հ.2, Ե., Երևանի համալսարանի հր., 1984, էջ 481:

Լաստիվերտցու Հայաստանը կոխկրտված է, իսկ Հակոբյանի Արցախա աշխարհը փորձում է հաղթության դափնիներով զարդարել իր հերոսներին, իր լուսապսակ հագած նահատակ սրբերին…

Սպասում եմ,
որ ճակատիս գրերում ճշտումներ մտցնի Տերը,
որն ինձ տվել է տառապանքը անկշռելի
ու ամեն պահ բզկտվող աշխարհի ամենամեծ սերը [1]**:**

Ու արարման, փլուզման, վերակերտման, կորուստների լաբիրինթոսում ու գեհենում անգամ Պլուտարքոսը անհայեցական է, գիտե որ

Աստվածների և
չաստվածների կռիվն է անվերջանալի:

Ժամանակները սառնարյուն են, հաշվառք ունեն, անբարո ու անմիխիթար են, սակայն, գիտե

Անցնում է
ամբողջ մի հավիտենություն [2]**:**

Արցախ աշխարհը, սակայն, գիտե ներքուստ ծանրութեթև անել լույսի ու ստվերի, արյան աշխարհը: Այլևս մահտարաժամ ու մռունչ է՝ խոժոռամիտ.

Սամումը սև անապատի եկել, լեռան դուռն է ծեծում:

Հայոց Արցախա ամուր ու վեհ լեռները ևս այրուձի են, ներքին կորովով ու սպասելիքով: Այսպես-նախասկիզբն է ասքի, հերթապահ-զգուշացում. քամելիոն ու լորտու, աշխարհի հոգը չէ՝ ո՞վ և ի՞նչ է լինում. Հակոբյանի բանատողը ասքաշող է ու հարցում, պարադոքս ու անպատասխան, անշուշտ, ինքն էլ և՛ սամումը ցույց կտա, կբացահայտի, և՛… ասքաշողը.

Ամենաթեժ կետը երկիր մոլորակի, ուր կանգնում եմ՝
ոտքիս տակ է…

Իսկ դա Արևելից տունն է՝ Արցախա տունը, խենթ-խիզախների սրբատեղին՝ արյունածոր, վիրակապ թևերով ու թոնրաշուրթ սրտով… Վի՞պենք… Վիպում է Հակոբյանը թերևս ափսոսանք ունենալով խոհակիր հոգում, ամուլ ապրած երազների համար.

Անծաղիկ ծաղիկը աշնանավերջի ափսոսանքն է…

Այսպես երազադիր՝ ժամադրումով կայանում է մի խորհրդավոր ծես՝ առասպելաբանվելուն միտված՝ հոգուն ու սպասելիքներին բևեռված՝ Սաթենիկի թոռ, Սարգսի ծուռ որդու խռովքին՝ համադիր և հլու.

Իսկ դրախտավայրը կայանում է միայն կորսվելուց հետո [3]**…**

Դա այդպես է՝ լինի սիրո, ծաղկի, ծիլի, բույրի, լույս ստինքների. իսկ Աղամայգում կաթը գժվում է բանաստեղծվելուց:

Իսկ կյանքի անցումներում նրանք են կանգնած՝ ասացողի խոհակիցները, սիրակիցները, երազակիցներն ու չեն գտնում, ու գտնում են…, կորցնում են ճամփաներն անթվակիր, անհասցե, որ իրենցը և իրենցը չե՛ն… չե՛ն. ամեն ինչ խունկ, ամեն ինչ անգո… ու անցումները՝ շիկացած, որոնք բանաստեղծի միջով են անցնում, նախանիշ են ինչ որի, որ որն է՝ աներկյուղ, նա գուցե՞ թե՝ անգոն ու անդեմը.

Բերում է աչքեր, դեռ ոչ ոքի չտեսած…
Բերում է սիրտ, դեռ ոչ մի կրակում չկիզված …[4]

ու սիլլոգիզմներն են ընթացքավորվում, որ փիլիսոփայինն է, այստեղ՝ Վարդանինը, ու շիկացած պատկերները, որ քերթողինն են, ու ասացումները, որ ասացողինն են ու աստղածղի են, հուշաբույր, երկնառաք ու բազմաստեղ են, հույլք-հույլք, ուր Հակոբյանի անսանձ հոգին է թևածում, չափ ու ձևույթ չընդունող, ասրափայլ ու կոստնտոտիկին խոհակիր՝ սարսռամիտ… սուլում են, փնչում են, ելնում ու թևում են: Արցախա պիրկ լեռներ ու ձորերն են, այրուձի են, արնացոլք ու երազ են, հրեղեն լույս… ինքնաորոնման ու ինքնաճանաչման, ինքնատեսության խենթացումն է: Այդ ամենը նաև հոգեկրի պես զինվորացու են՝ դեռևս չպտուղված, իսկ պտղավորվածները՝ պապ ու տատիկ են:

---

[1] <<Քրիստոսի ծաղիկները>>, էջ 502:
[2] Նույն տեղում, էջ 504:
[3] Նույն տեղում, էջ 504,505:
[4] Նույն տեղում, էջ 510:

Ես արդեն ինձ չեմ ճանաչում Աստծո տված քո վրձնի ծայրին,
և սա իմ ինքնահաստատումն է ժամանակի
և տարածության մեջ…
տիեզերական…[1]

Բանաստեղծի ինքնահաստատումը ելման կետն է, որտեղից ամեն ինչ այնքան պարզ է ու… միաժամանակ չհասկացված, որտեղ սիրո, կարոտի, ցավի, երազի, չաստվածների, հեթանոս աստվածների սարսուռների դռները բացվում են ու չեն փակվում, բանաստեղծին դողէրոցքով պարուրում.

Իսկ մեր տունը՝ սպասումն է մեր, սուրբ սիրո մեջ,
բա¯րձր, բա¯րձր, ամենավեհ լեռան վրա աստվածամերձ …[2]

Քննելով Մուրացանի պատմության փիլիսոփայության համակարգը, մի առիթով Սարինյանը նկատել է.<<**Մուրացանը պատասխանելու համար ներկային, հարցում է անում անցյալին>>**… Թերևս դա պատմավիպասանի, բանաստեղծի, մշակույթի մարդու համար պարտադիր ստեղծագործական նախապայման է:

Այս զգացողությունն ես ունենում <<Գալիքի հրավերքը կամ առերեսում անցյալի հետ>> հատվածը ընթերցելիս ու… որպես վտանգը նախազգող ցավի մեկնություն, բանաստեղծը նախածին բնազդով անհանգիստ է Արցախ աշխարհի համար.

Կրակը լափլիզելով՝ ինչ պատահի, մոտենում է…
(Վիհ: Անդունդ: Թռիչք-անցում):
Անհասին հասնում է նա, ով չի հասնում. որովհետև՝ երբ
Աստված է խոսում
լսում է բանաստեղծը,
ուշիմ,
խելագար,
երբ սկսում է խոսել բանաստեղծը,
Աստված չի <<լսում>> [3]**:**

Իսկ աշխարհը, մարդիկ, և առավել՝ Աստված, լուռ են մի խորհրդավորությամբ.
դրանից առավել անհանգիստ է բանաստեղծը.
քանզի եթե լսող չկա, առավել ևս՝ պիտի ասել, ասել, ասել…

Իսկ, որ ավելի սահմռկեցուցիչ է՝ կրակն մոտեցող
<< լափլիզող է>> ու ծառն՝ այստեղ՝ Արցախական տունն է,- ծառը տեսնում է-
ու չի կարող փախչել, ու չի կարող նահանջել ծառ է՝
ընդերքներում խորը ագուցված արմատներով:
Չի¯ էլ փորձում [4]**:**

Այո՛, ծառը՝ Արցախա տունը, մետաֆորիկ է, անձնավորված, խորախորհուրդ պատկեր- հարցադրում է, քանզի Արցախա տունը՝ հին ու արմատավոր է, որքան էլ վտանգը կա, միևնույն է՝ ինքն իր արմատներով հողի ընդերքում է. փոթորիկներ կգան ու կանցնեն, հողն Արցախական անանց է ու հավերժական…

Բանաստեղծի հիշողությամբ՝ արցախցին քրիստոսածաղիկ է, հաճախ՝ նահատակ, պատրաստ նորից հանուն հող հայրենիի՝ մարտիրոսվելու, լուսապսակ կրելու…

Բանաստեղծը նախ և առաջ փիլիսոփա է. խոհածումները նրա՝ սիլլոգիզմներ են՝ պատճառահետևանքային կապերով, առաջնայինից՝ երկրորդայինը միտվող սքողումներով, աֆորիզմիկ՝ հետ ու առաջ դարձվող քննումներով. հարկա՛վ-

Հինը այն է, որ նոր չի լինում ոչ մի ժամանակ:
Քանզի բանաստեղծությանը ես մոտիկ եմ եղել
անհամեմատ,

[1] Նույն տեղում, էջ 511:
[2] Նույն տեղում, էջ 513:
[3] Նույն տեղում, էջ 514:
[4] Նույն տեղում, էջ 514:

երբ ավելի, անասելի շատ հեռու էի բանաստեղծությունից,
երբ ես դեռ չէի ծնվել,
բայց, անշուշտ, սերը կար աշխարհում:
Եվ բանտերը ազատության օազիսներ են:
Եվ ի՞նչ պոեզիա, եթե բանտերը լիքը չեն պոետներով:
Ու չնայած չափանիշ է և՛ ցավ և՛ կարոտ, և՛ սեր, և՛ իշխանություն,-
Սուտ է, թե արքաները մենակ չեն մնում,
բոլոր արքաները լինում են մենակ:
Իսկ թե մենակ չեն՝ ինչ արքա:

(Աղվանից Վաչե արքայի երկվությամբ տնքող
հոգու հանգույն է բանված)…

<<Լափլփող կրակի>> արահետներում Արցախական աշխարհն է:
Ապագայի հրավերքը Աստծո սուրբ ոտնահետքն է հայոց
բիբիլիական լեռան վրա…[1]

իսկ ճանապարհները ոտնահետքերն են, ոտնաձայները՝
տիեզերացունց մռնչյունով Սիամանթոյի, Ռուբեն Սևակի,Վարուժանի…
ու բանաստեղծված Արցախա հողում քերթության ու քերթողի շրշյուն է, ոտնաձայն,-
Ծանրացել են դեպի լյառն Արարատ բարձրացող Ուիթմենի
Քայլերը …[2]

Ու Ռըսկան սարը վիպական պահվածքով կարծես ելել է ծիսատրուքի.

երեսը փռել է ոտքերի տակ արեգակի՝
մի անծայրածիր, արյունռուշտ ժամանակի մեջ [3] :

Հակոբյանի <<Քրիստոսի ծաղիկները…>> արդի հայ քերթողական արվեստի, ազգային և համազգային գեղագիտական շերտերի բնաձո է, քերթության անկրկնելի աշխարհ, որը ստեղծագործական բարձր մակարդակ է նախանշում, և ամենագլխավորը՝ ներկայանում է որպես արցախցու հաղթության զարմանահրաշ, տիեզերադեմ ֆենոմենի պոետական արքետիպ…

[1] Նույն տեղում, էջ 516-518:
[2] Նույն տեղում, էջ 523:
[3] Նույն տեղում, էջ 524: